ուղղափառ՝ Յովհաննէս Խուլը, Զաքարիա Վանեցին և Կիրակոս Երևանցին։

Արդարև «չարափառ»ներ էին Գալանոսի տեսակէտով Գրիգոր Կեսարացին և Սիմոն Զուղայեցին, որոնք ուղղակի արգելք էին կաթոլիկ քարոզչական և կրթական գործունէութեան՝ իրենց աշխատութիւններով, թէև, ինչպէս ըսինք, անհաւասար զէնքերով ըլլար իրենց կռիւը, որուն մէջ իրենց հետ ունէին միայն ազգին հոգին և զգացումները, որոնք ինքնապաշտպանութեան գրեթէ տարերային պոռթկումով կ'ըմբոստանային արտաքին յարձակումին դէմ։

Մանաւորապէս մեծ եղած է այս պայքարին մէջ Գրիգոր Կեսարացիի դերը, որ աննկուն եղած է հզօր ոյժին առջեւ օտարին եւ անկէ չահուած թուրք պաշտօնատարներուն։ . . . . . .

Բ.

218rդ էջին տակ դրուած ծանօթութեան վրայ պէտք է աւելցնել՝

վասնզի՝ Աւետարանը որուն համար ըսուած է թէ հրդեհին զոհ գացած է, փրկուած է և հիմա կը պահուի Ֆիլիպէի եկեղեցիին մէջ։